



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՍ 127

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՎԱՏԱՀԷ

Եթէ Տէրը ինք չշինէ տունը,  
գուր տեղ կը յոգնին զայն շինողները.  
Եթէ Տէրը ինք չպահպանէ քաղաքը,  
գուր տեղ կը հսկեն պահապանները:  
Առանց Տիրոջ՝ գուր տեղ է որ կանուխ կ'արթննաք  
եւ գիշերը ուշ հանգիստի կ'անցնիք՝  
տառապանով հաց մը ուտելու համար.  
Տէրը ինքն է որ քուն կը պարգեւէ իր սիրած մարդուն:  
Տէրը իբրեւ ժառանգութիւն՝ որդիներ կու տայ,  
իբրեւ վարձատրութիւն՝ զաւակներ կը պարգեւէ:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատէր Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աշ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ԹՎՓԱՏՈՒԹԻՒՆԸ ՈՒԽՏԻ ՆՇԱՆ (17:1-27)**

Աստուած սպասեց որ Աբրահամ 99 տարեկան ըլլայ որպէսզի ցոյց տայ մարդուն տկարութեան մէջ իր գործութիւնը:

Այս հաստատումը կը սկսի հեքաբարբառական բացատրութեամբ մը, որ մեզի կը ներկայացնէ Աստուծոյ ինքնութիւնը: «Ես եմ Ամենակարող Աստուածը»: Այս արտայայտութիւնը ցոյց կու տայ թէ՛ իբրեւ անուն եւ թէ՛ իբրեւ ինքնութիւն: Ժամանակին բազմաթիւ ժողովուրդներ իրենց աստուածները ունէին եւ ամէն մէկը ունէր իր անունը: Իսկ Աբրահամի պարագային իր Աստուծոյն անունը Ամենակարող է, որով նաեւ ցոյց կու տայ Իր ինքնութիւնը որ Ան ամէն ինչի կարող է, ու մանաւանդ անկարելի բան չկայ Անոր համար: Այս արտայայտութիւնը անոր համար, որովհետեւ Աստուած Աբրահամին պիտի տայ խոստում մը, եւ այդ խոստումը զուակ մը ունենալու խոստումն է, ուստի առաջուց կը պատրաստէ Աբրահամին ըսելու համար, թէ քու գործը Ամենակարող Աստուծոյ հետ է, եւ ինչ որ կը խոստանայ Ամենակարողը կը կատարէ, որովհետեւ Իրեն համար անկարելի բան չկայ:

Նոյն էր նաեւ պարագան երբ այս անգամ Աստուած յայտնուեցաւ Մովսէսին եւ ըսաւ. «Ես Ան եմ որ Է» Ես հուր, որ կը նշանակէ միշտ գոյութիւն ունի, ի տարբերութիւն Եգիպտոսի չաստուածներէն որոնք ժամանակաւոր եւ քարէ գոյութիւններ էին:

«Իմ առջեւ քալէ ու կատարեալ եղիր»: Աբրահամ արդէն որոշ կատարելութեան մէջ էր, բայց Աստուած կ'ուզէ, որ Աբրահամ այդ ճամբուն մէջ ալ մնայ եւ շարունակէ այդպէս ապրիլ, որ կը նշանակէ Աստուծոյ կամքին համաձայն ապրիլ:

Աստուած Աբրահամի հետ Ուխտ մը կը կնքէ: Ուխտ կը նշանակէ դաշինք, համաձայնութիւն: Ուխտ մը, որ սակայն ժամանակաւոր չէ, այլ՝ յաւիտենական: Թւիստութիւնը իբրեւ այդ Ուխտին նշան:

Աստուած նաեւ անուններու փոփոխութիւն կ'ընէ: Անունի փոփոխութիւնը նաեւ կը նշանակէ նկարագրի փոփոխութիւն, կոչումի փոփոխութիւն:

Թւիստութիւնը որպէս Ուխտի նշան, հակառակ անոր որ շօշափելի, արտայայտութիւն ունի, սակայն պէտք է նկատի ունենանք անոր հոգեւոր իմաստը: Թւիստութիւնը ինքնին մարմնին վրայ անջնջելի հետք մը կը ձգէ, որպէսզի անով մարդը յիշէ, որ Աստուած իր հետ Ուխտ մը կնքած է, եւ այդ ձեւով ինք Աստուծոյ զուակն է, Աստուծոյ ընծայում, նուիրում, Անոր կը պատկանի: Ուրեմն առաջին իսկ առիթով թւիստութիւնը յիշեցում մըն է: Երկրորդ, «Երկրորդումն Օրինաց» գիրքը, ինչպէս նաեւ Պօղոս Առաքեալ Հռոմայեցիներուն նամակին մէջ, թւիստութեան մասին խօսած ժամանակ զայն կը ներկայացնէ որպէս «սրտի թւիստութիւն», որ կը նշանակէ մարդուն մտածողութենէն դուրս հանել եւ հեռացնել բոլոր այն խորհուրդները զորս կը կոչենք պիղծ, չար կամ անմաքուր մտածողութիւններ:

Իսկ երրորդ նշանակութիւնը թւիստութեան, կարելի է տեսնել համեմատելով Նոր Կտակարանի քրիստոնէական մկրտութեան հետ: Եթէ անցեալին թւիստութիւնը պայման էր ամէն մէկ հրեայի համար որպէսզի «Աստուծոյ ժողովուրդէն չկորսուի», մկրտութիւնը եւս պայման կը դառնայ փրկութեան իբրեւ խորհրդանիշ: Ինչպէս պիտի ըսէ Պետրոս Առաքեալ. «Ձեր ամբողջ սրտով Աստուծոյ դարձէք եւ մկրտուեցէք, որպէսզի ձեր բոլոր մեղքերը ձեզի ներուին» (Գործք 2:38): Մկրտութիւնն ալ անջնջելի դրոշմ է, կնիք է, եւ թւիստութեան նման անկրկնելի: Եթէ նոյնիսկ տեսանելի չէ մարմնաւոր աչքով, բայց անիկա Աստուծոյ կողմէ հոգեւոր այն կնիքն է, որ մարդու վրայ կայ եւ կ'արտայայտէ Աստուծոյ հետ յատկական, անջնջելի ուխտը:

Հեքաբարբառական է այն արտայայտութիւնը որ կը կարդանք «Աբրահամ խնդաց»: Այս խնդալը սակայն ոչ որպէս չհաւարալ իմաստով, որովհետեւ Աստուած դիպողութիւն չ'ըներ Աբրահամին, ինչպէս հեքաբարբառ Աստուած Մարան կը հանդիմանէ (Ծննդ 18:13): Այլ խնդացը, որովհետեւ Իսահակ կը նշանակէ խնդութիւն, եւ ահա Աստուած հազիւ խոստումը տուած Աբրահամ այդ խնդութեամբ կը լեցուի, եւ փակաւին ոչ միայն եղածով, այլ գալիքով, որուն ընդմէջէն կ'երեւի Քրիստոսով պարզուուելիք խնդութիւնը, փրկութեան ատերիստով փրութիւնը ուրախութիւնը բոլոր ազգերուն: